

խակական աղբիւրին դիմենք և աղաչենք՝ այդ-
պիսի հոգեով չի մշակենք ուղարկել։ Բայց չենք
ձանաչում և իսկապէս հոգեոր մշակների կա-
րօս անգամ չենք զգում։ Խօսում ենք յիրար
շատ նոցա մասին, բայց առանց լրջօրէն մեզ
հարց տալու, թէ ինչի համար են և ի՞նչ պա-
կաս պէտք է լրացնեն։ Մենք այնչափ նիւթա-
կան ու մարմնաւոր ենք դարձել, որ նոցանից
սպասած հոգեոր գործը այլևս անհրաժեշտ
տարր չէ կազմում մեր կեանքի։ չլինի էլ կար-
ծում ենք, կկառավարուենք։ Եւ սակայն ան-
հրաժեշտ է այն. անհրաժեշտ այնչափ, որ ա-
ռանց նորա մեր մարմնաւոր բարիքն ևս հաս-
տատութիւն ու տեւականութիւն չի ունենայ։
Ժամանակ է, որ զգանք ու հասկանանք այդ,
և խնդրենք հսձի Տիրոջը, «դի հանցէ, մշակս
ի հունձս Խլու»։



ՔՐԻՍՏՈՍԻ ԺՆՈՒՆՓԸ*

«Եկա՛յ Երրիցո՛ւ միև, և ցիւրդե՛ն հա-
նգո՛ւ զիմ և քան ա՛յս որ եղի»։

Դուդ. Բ. 15.

ՍԻՐԵԼԻՔԻ, եթէ կարծէք, թէ կարճ քարո-
զը Քրիստոսի ծննդեան տօնին չի պատշաճի հա-
պա ուրիշ ի՞նչ քարոզ շահաւէտ կարող է դառ-
նալ այս օրուայ համար, քանի որ ոչ մի բառով
չի յայտնուի այն սրանչիւի մեծութիւնը, թէ
Աստուած մարդ դարձաւ և թէ մարդը կարող է
աստուածանման դառնալ։ Մի քանի աստուա-
ծաբաններ իրանց նեղ հայեացքով մարդեղո-
թեան խորհուրդը կապել են միայն մեղանշու-
թեան կամ պատուիրանազանցութեան հետ։ Բայց
աւելի ճիշդ է հին Հայրապետների գաղափարը,
որոնք մարմնաւորութիւնը մարդու ստեղծման
օրինակ են համարել և այդ բանով բացատրել են
համայն գոյութեան խորհուրդը։ Նոքա մարմնա-
ւորութեան մէջ տեսնում էին կենաց, բնութեան և
տիեզերքի անդ առեղծուածի լուծումը։ հաւատոյ
աշըով թափանցել են աւելի մեծագոյն խորհուրդ-

ների խորութիւնների մէջ, քան ինչ որ նշմար-
վում է երկրի տաղտուկ մակերևութի վերայ,
տեսել են յուսոյ կայծեր, որոնք փայլում են
մեր պարտականութիւնների և զուարճութիւննե-
րի ձանձրալի հանապազորդութեան մէջ։ Այս
տեսակետով հասկանալի է դառնում, թէ իրօք
մեծամեծ գորութիւնները միշտ գործում են ու-
նայն և սնափառ ձգաւմաների հետ կից ընդ կից,
թէ թշուառ մարդկանց չարչարանքները ներկայ-
ացնում են այն կենաց փոքրիկ փլատակներ, ո-
րով ապրել է Յիսուս Քրիստոս երկրի վերայ, որ-
պէս աղքատ մարդ։ Մենք խմանում ենք, որ աշ-
խարհի բոլոր անհուսաւորութիւնների վերայ,
բոլոր սոսկալի ներհակութիւնների վերայ, որով
գործւում են յուսահատ ոճիրներ, երևում է
Աստուածային փրկագործութեան հետք, այնչափ
խոշոր, որչափ երկինքն է, այնչափ պայծառ,
որչափ արեգակն է։ Այս հայեցուածով Ծննդեան
տօնը ուրախութեան հաւաստիք է, անհուն ան-
սահման ուրախութեան առհաւատչեայ է։ Մենք
այժմ ունինք այն մարդարէութեան ստուերը, որ
մի օր լիուիլի պիտի կատարուի մեր ժամանակա-
ւոր աշխարհից այն կողմում։ Մեր տների զարգա-
րանքը, եկեղեցիների ճրագալոյցը, դանդաղների
զոզանջիւնը, ապա ժպտուն դէմքեր, քաղցր ա-
ւետիսներ, երգեր, ուրախ խմբեր, տօնական
զրուեր (երանի թէ այսպիսիների թիւը շատ լի-
նի),—այս ամէնը լոկ թոյլ նշաններ են առելի
խոր իսկութեան, այս ամէնը երկնային հրեշտակ-
ների օրհնեղութեան լոկ արձագանքներ են, որ
հեռուից լսելի են երկրի վերայ, այս ամէնը ծննդ-
դեան այն առաջին հոյակապ երեկոյի լոկ ցոլացած
ճառագայթներ են, երբ որ երկինքը բացուեցաւ
ճշմարիտ լուսոյ ծագման համար։ Փոյթ չէ, գոհ
լինինք նաև այդ չափով, գրկաբաց ընդունենք
այդ պարզեւ, միայն թէ բերէ խաղաղութիւն,
յոյս և նայն իսկ ուրախութիւն վշտացած և թե-
րահաւատ սրտերին։ Տէր Աստծու ճանապարհ-
ներն այլ են, և բացէիքաց նման չեն մարդկային
մուրաբ ճանապարհներին։ Մարդկային չնչին խոր-
հուրդը կատարվում է թմեկի և փողի ձայնով,
մարդու բարկութիւնը արտայայտվում է իւր
սաստկութեան համեմատ—երկիրը թնդեցնելով
կամ փոթորիկ հանելով։ Իսկ Աստուած գործում է
համբերութեամբ, և Իւր ծառաների սիրտը շար-
ժում է մեղմ, քնքոյշ ձայներով։ Մարդկանց աշ-
քում որ և է Տիրերիտ կայսր, Ապափա իւր ե-
փուղով, Պիղատոս իւր ատեանի մէջ—մեծ մար-
դիկ են։ Աստուծոյ առաջ այդպիսի մարդկային
փոքր մեծութեան մանր փառաւորութիւնները,
ոչինչ բաներ են։ Ամենայն ժամանակների և աշ-
խարհների Տէրը մեզ մօտ իջաւ լուութեան և
մթութեան մէջ, որպէս նորածին փոքր մանուկ։

* Փարսի քաղաքի մի ժողովածոյի (25 հաս-
խար.) քաղգմանութիւնը պատշաճ է արագորոշեան
համար, որոնց մէջն է նաև առաջիկայ քաղաքը։

իւղական խոնարհ իջևանի մասերի մէջ: Ուրեմն ամենայն որ, որ կամենում է գէթ վտեր ինչ հասկանալ Ծննդեան խորհուրդն ու ճշմարիտ ուրախութիւնը, թող մեկդէ թաղնէ գոռոպամտութիւնը, ուսուցիչի հանգիստաւորութիւնն ու իմաստակութիւնը, և այս խոնարհ օրօրոցին մերձեւայ անարատ միամտութեամբ, մանկական սրբտով: Ծննդեան օրը հրաւերում եմ ձեզ գալ այն խոնարհութեան հանգերձով, որ հազին ունէր ինքը մեր Փրկչը: Դուք ամէնքդ զգում էք կեանքի փորձութիւնները, կեանքի գաղանկը, կամեւսում էք ոչնչացնել այս տանջութիւնները, բժշկել այս մեղքերը, դուք ուզում էք շատ ու քիչ բան հասկանալ այս կամ հանգերձեալ կեանքից: Այդ դուք կարող էք հասնել նպատակին, եթէ գտեք ձեր Փրկչի վարքը, մերձենալով նորա խանձարութիւն, կանգնելով նորա խաչի մօտ, անմահ հրեշտակի հետ ի մասին նստելով նորա ամայացած գերեզմանի եզերքին: Արժուալեայ հաւատքով գնացէք զինն նորա և դուք կը տեսնէք երկնքի գոնքը քացի, իսկ Յիսուս Քրիստոսին կանգնած Հայր Աստծու աջ կողմը: Եկէ՛ք մի երկու լույս մ'անց Բեթղէմում Քրիստոսի խանձարութիւն մօտ, և տեսնենք, թէ ինչ կարող ենք ուսանել այն տեղի:

Չեզանից ոմանք աղքատ են: Հապա գիտէ՞ք, թէ Ծննդեան խորհրդի մտածմունքով ինչ անձաւելի ցնծութիւն պիտի ծագի ձեր սրբտում: Չեր. Տէրը նոյնպէս աղքատ էր, ինչպէս որ դուք էք, ինչպէս ձեզանից շատերը: Չեր մանկներին սրեցէք և պաշտեցէք, որովհետեւ նա էլ աղքատ մանուկ է եղել: Փոյթ ունեցէ՛ք, որ զոքա էլ նորա պէս հեզ, սուրբ և ոչ անձաւապաշտ լինին: Նա էլ քաղցած է եղել, նա էլ մրսել է, ինչպէս որ ձեզ է պատահում: Չկարծէք թէ ձեր սենեակները, կտուրի տակ կամ նկուղի մէջ, աւելի անյարմար են, քան Բեթղէմի մը սուրբը, կամ թէ ձեր աշխատութիւնը աւելի խոնարհ է, քան նորա աշակերտութիւնը նազալէթի հիւանդ խանութում: Լուսահրաշ երկինքը բացուեցաւ աղքատ, խոնարհ, տգէտ մարդկանց առաջ, այն աղքատ հովիւների առաջ, որ գաշտում հօտ էին պահպանում: Նախ գրեաւ արժանացան տեսնել սուրբ Մանուկը խանձարութեամբ: Կարող էք նոքա հետ ընթանալ մի սրտով և մի մարմնով: Աղաչում եմ ձեզ, ի սէր Աստուծոյ, մի ստորացնէք Ծննդեան օրերը արեւեցութեամբ, ձեր կրօններն յագուրդ տալով, անզգամութեամբ, ինչպէս որ անում են շատ և շատ քրիստոնեաներ: Թող Քրիստոսի խանձարութեամբ սովորեցնէ ձեզ յարգել ձեր անձը, պատուել այն ազնիւ բնութիւնը, որ նա ձեզ պարգեւել է և որ Ինքն էլ ընդունեց ձեր փրկութեան համար, նա եկել է,

որ օրհնէ աղքատութիւնը, ոչ այն պատճառով, երբ թէ աղքատութիւնն ինքն ըստ ինքեան աւելի սրբազան է, քան հարստութիւնը, այլ որովհետեւ մարդկանցից շատերին աղքատութիւն է վիճակուած: Եւ որպէս զի աղքատի սրտի մէջ յայտ հաստատէ, նա՛ հարուստ գոյով՝ աղքատ դարձաւ: Դուք էլ ուրեմն ձեր աղքատութիւնը պէտք է կրէք համբերութեամբ և համեստութեամբ: Դուք ձեր խաղաղ աղջամուղջի մէջ պէտք է սպասէք տակաւին աներեւոյթ արշալուսին, որ իւր գալուստը աւետում է թռչունների քաղցը երգերով լուսաբացից առաջ, կամ որ մոխրամած արեւելքում նշմարելի է դառնում առաջին վարդախարամը ճառագայթներով:

Միւսներդ՝ հարուստ էք: Դուք էլ մերձեցէ՛ք մտաւորին, որովհետեւ հարուստները գանուել են թէ՛ նորա խանձարութիւն և թէ՛ նորա գերեզմանի մօտ: Հեռու արեւելքից եկել էին «երեք արեւելեան թագաւորներ», ինչպէս որ մօզերին անուանում են: Նոքա եկան մեծատուններին վայել՝ ընծաներով, որ բերել էին խոնարհութեամբ, անտրտունջ, ոչ որպէս հարկ կամ առագանք, այլ սրտի լիառատ բերկրութեամբ: Իրանց գանձից պատարագ հանեցին ոսկի, կնքուի և զմուգ. ոսկին՝ թագաւորի համար, կնքուի կամ խուսիկ՝ Աստուծոյ համար, զմուգը կամ աղիւս իւղը՝ թագման համար: Սակայն բերած ամէն ընծաներից առաւել նշանաւոր էր արժանաւոր կենաց ոսկին: Սուրբ սրտով երկրպագութեան կնքուի և կարեկցող հոգւոյ արամութեան զմուգը, որ և մենք կարող ենք և պարտաւոր ենք ընծայ բերել: Նոքա կարող էին՝ աղահանձնապաշտութիւնից զրգուած՝ ոսկին ու թանկ գանձերը պահել իրանց անձի համար, իրանց զուարճութեան համար, իւրանց փաթեմութիւնը աւելացնելու համար, իրանց ուստեց և դստեց հարստութիւնն աճեցնելու համար: Հարկաւ նոքա կարող էին այդպէս վարուել, քայց միթէ չէ՞ք խոտով անում, որ իրանց գանձը Տէր Աստծու խանձարութիւն պատարագելով և իրանց նուէրներն այնպէս անմահացուցանելով, նոքա աւելի բախտաւոր սեպեցին իրանց անձը: Դուք էլ կարող էք այս օր ձեր ընծաները բերել նորա մօտը: Չեր փոքր եղբայրները մէկին տալով՝ դուք տալիս էք նորան: Այն դրամը, որ այս օր գանձանակը ձգէք, կը պաշտպանէ ձեռների վերայ քաղող փոքրիկ ուղեքը, կը տաքացնէ զողողաժ փաքրիկ անգամները, քաղցածին կու տայ հաց, մերկին՝ հագուստ: Չեր առատաձեռնութեան նուէրները բոցավառ կը ճառագայթեն խեղճ օճախներում, կը լուսաւորեն աղքատների թշուառ մանուկնե-

ընկերները, կը փայլեցնեն որդերի աչքերը և կուրախացնեն այլն կնոջ սիրտը: Մեթէ այդ գրամը կորսուտ կը համարէք: Մեթէ աւելի բախտաւոր կը լինիք, եթէ գրամը պահէք ձեր գրպանում: քան եթէ յանուն Յիսուս մանկան դանձէք, որով կործեն թէ սպիտակ հանդերձ հազած և երկնագոյն թեւեւ բառած՝ իրօր կողմէք այնպիսիներն, որոնց համար որ խաչեցաւ և թաղեցաւ Քրիստոսը: Ահ, սիրելի հարուստներ, այս օր Բեթղեհէմեան մատրքում չըբաժնարդե՞ք իմանում արդէն այն ճշմարտութիւնը, որ վաղ թէ ուշ մահուան ստիպիլի ժամին յանկարծ պիտի զգար, թէ միայն Յիսուս Քրիստոս կարող է պարզեցնել մեզ երկնաւոր կեանքը, բայց թէ կեանքը միայն այս աշխարհում չի վերջանայ և թէ մահուամբ՝ ամենայն ինչ չի մեռնի:

Բայց աղքատներից և հարուստներից, ձեր մէջ կան նաև վշտացածներ: Դուք էլ առաջ եկէք Քրիստոսի խանձարութիւն, որին որ դուք ունեւի կարօտ էք, քան միւսները: Տրամած էք դուք: Ահ, նա էլ արտամած էր՝ «մինչև ի մահ» արտում էր՝ նորա ոգին և ասաց. «Հայր իմ, եթէ հնար է, անցցէ բաժակս այս յինէն»: 1 Նա ամէն տեսակ վշտեր է կրել, միայնութիւն, մարմնական չարչարանք, բարոյական յուզումն, մարդկանց անըդդամութիւն և ցածութիւն, մինչև իսկ խաչելութիւն: Այս չքնաղ, քնքոյշ մանուկի վերայ, որ խանձարութիւն մէջ փաթաթած այս օր մեր առջնն է, արդէն տխրած է խաչի ստուերը, նորա արեան վերջալոյսը փայլում է նաև նորա ոսկեճաճանջ արշալոյսի վերայ: Զարչարաններով նախադործած՝ նա կարող է ամէնքիս սովորեցնել, թէ վշտի մէջ ինչպէս դռները միմեծարութիւն, դուրս թիւն և վեհութիւն: Աւագ, սիրելիք, դիտեմ, որ ձեզանից ոմանք այս Ծննդեան տօնին իրանց ասան մէջ դատարկ տեղեր կը տեսնեն, էլ չեն դռնի սիրելիներն, որ անցեայ տարի կենդանի էին: Գիտեմ և սիրտս մորմուրում է ձեզ համար, բայց մի մոռանաք, թէ Որդւոյն Աստուծոյ մարդեղութեան ուրախութիւնը հետք բերում է նաև յարութեան ուրախութիւն, և թէ չկայ ոչ մի փոքրագոյն երկրաւոր ուրախութիւն, որ խոտում և աւետիս չլինի նաև երկնային յաւիտենական ուրախութեան: Մեր ուղեւորութեան և ձեր սերեցեալների ուղեւորութեան վախճանը՝ այս տեղ չէ, Մարդկային կենաց մէջ ժամանակներ կան, երբ որ փշում է հողմ, գալիս է անձրև, շրջապատում է ցուրտ ու բուրբ խի երբեմն ևս փայլում է արեգակ, երգում են թռչուններ և ամենայն ինչ մայիսի պոյճաւութիւն է հանդիսացնում, սակայն երկու գէպըումն էլ մենք միշտ

առաջ ենք սլանում և մեր ուղեւորութեան կէտ նպատակը բնաւ չի փոխվում: Մեթէ երբ որ ծուներ էք դնում սուրբ Մանկան խանձարութիւն, ձեզ չէ՞ն միմեծարում այս բառերը, թէ «Եկայք առ Իս, ամենայն վաստակելուք և բեռնաւորը, և Ես հանգուցից զձեզ»:

Բայց դուք, և՛ աղքատներդ, և՛ հարուստներդ, և՛ վշտացածներդ, դուք ամէնքդ մեղանչական էք, ուստի ձեր տեղանքին ախորժ կը հնչի հրեշտակների ձայնը, թէ «Փառք ի բարձունս Աստուծոյ, և յերկիր խաղաղութիւն» ի մարդկի հաճութիւն: 2 Եթէ դիտէք, թէ Աստուած ինչպէս ասում է մեզը, մի և նոյն ժամանակ տեսնում էք, թէ նա ինչպէս է արդահատում և սիրում մեղաւորին: Մերձենանք նորա որորանին և ուսանենք այդ խրատը: Երբ և իցէ ունայնածեռն դարձրել է նա Իրան դիմող մեղաւորին, նորա մօտ եկաւ հրէաներին և հեթանոսներին հաւատարմութեան աստիճան մաքսաւորը, և Քրիստոս Իւր բաղմաբեղուն սիրով կենդանացրեց այդ ամէնից ծաղրած և խեղճ մարդուն: Թշուառ անառակ կանայք արտառում զալիս էին նորա մօտ, և նա չէր մերժում նոցա, այլ բժշկում էր նոցա նախատիւքը: Շնորհեան ըմբռնած կենը հերարձակ, երեսանկեալ, լալով, ընկած էր նորա առաջ տաճարի յատակին, և նա նոյն իսկ դուրան ասաց. «Եւ ոչ ես դատապարտեմ զքեզ, երթ, յայտմ հետէ մի մեղանչէր»։ 3 Ահ, եթէ այս տեղ կան մարդկի, որոնք իրանց արդար են համարում և ուրիշներին անարգում են, որոնք ամբարաւանութեան բորբոսութիւնը տնմեղութեան ծաղիկ են համարում, եթէ նոցա այս խանձարութիւն առաջ չեն կարողանում հասկանալ Քրիստոսի Աւետարանի ազատական ոգին և անպայման սրբութիւնը—աղաչում եմ ձեզ, թող որ գէթ այս օր դուք քրիստոնեաներից փոքր ինչ զատուին, եթէ օգնելու շնորհք չունիք, գէթ մի խափանէք երկնի բաց դռները: Աստուծոյ արեւայութիւնը ձեզ չի պատկանում—բանալիքը այս տեղ է, այս սուրբ Մանկան խանձարութիւն մէջ:

Թող այս խանձարութիւն մերձենան բորբոսները, մերժեալները, վշտացեալները արտառուալից այտերով, մեղաւորները բնկեալ սրտով, անհնազանդ պոտանիները անզուոյ կրքերով, առաւարդ աղքատները, գայթակղած հարուստները, Թող դուք չըբեն և ազատ խմեն Սկիզբում մեզմ հոսող ջրից, լուսնան իրանց ցաւագար և զարհուրած հոգին երկնային երջանկութեան ու-

1. Մատ. ԺԱ. 28:

2. Դուկ. Բ. 14:

3. Յովհ. Ը. 11:

ին հեղեղի մէջ, կանգնեն երկնային անարատ լուսոյ կենդանի մէջ, Թող այդ բոլոր մարդիկ վախճան միտքը շփոթող մոլորութիւններէն մարմինը մաշող հեշտութիւններէն, հոգին ապականող մեղքերէն, և միմեանց շնորհաւորեն ու ցանկան Դննդեան տօնի երջանկութիւն, որ ևս էլ ձեզ ամէնից ի սրտէ մաղթում եմ, եկէ՛ք ամէնքս մեն ու փառքը, հարուստն ու աղքատը, յանցաւորն ու վշտացածը՝ ամէնքս՝ հաւատարապէս մեղաւորներս և հաւատարապէս փրկութեան յուսացողներս՝ եղբայրների պէս կանգնենք Մանուկ-Արքայի խանձարուրի մօտ, որ տեսներ լոյս Նորա լուսոյ մէջ, որ այս տեղից մեկնենք խառնասցած, սրբացած, բերկրացած և յուսով ու արկութեամբ լցուած: Արի, լուսաւորեաց, Երուսաղէմ, զի հասեալ է լոյս քո, և փառք Տեառն ի վերայ քո ծագեցին: Զի ահա խաւար ծածկեաց զերկիր և մառախլող գնէթանոսս բաց ի քեզ Տէր յայտնեցի, և փառք Նորա ի քեզ երևեցին»:

Ս. Ս.



ԿՐՈՆՉՏԱԴԻ ԱՒԵՐ ՔԱՆԱՆՑ

ԻՈՂԱՆՆ ՍԵՐԳԵԵՒԻ

70 ԱՄԵՆՑ ՅՈՒՆԻԱՆԵՐԸ:

ՍԵՐ այս նիւթապաշտ դարում, երբ կարեկցութիւն և մարդասիրութիւն աւելի խօսքով քան գործով են երևում, երբ անձնական շահ ու բաղդաւորութեան ձգտում զբաղան փրկիսփայտութեան հիմունք են համարուած, սթափեցուցիւ և թարմացնող ազդեցութիւն են գործում այնպիսի անձինք, որ այս բնդհանուր հասանքի հակառակ դնալով՝ մերձաւորն ու եղբօր համար խորհում ու գործում են: Արկնակի հրապուրել է գառնում այդպիսի պատկերը, երբ խօսքը ոչ թէ մի ընդարձակածաւալ երկրի տիրող իշխանի մասին է, կամ վաճառականական աշխարհի բաղդը ձեռքում խաղացնող մի Կրեոսի, կամ արտահարգ հանձարի, այլ հատարակ դասից ծագած համեմատաբար ու կոչման տէր անձի, որ իւր բարեգործ ու միւսթարող ձեռքը շատ հեռուն է մեկնում, իսկ անունն ու համբաւը աւելի ևս հեռու է տարածուում, որովհետեւ ազդակցին օգնելու

գաղափարը չէ, որ սահման է դնում նոր բարեգործութեան շրջանին, այլ Պղոթմած Սամարացու, դադարաւոր:

Ահա այս կարգի անձնաւորութիւններից է Կրոնապետի առաջ քահանայ հ. Իոհաննէս, որի 70 ամեայ յոբելեանը կատարուեցաւ ներկայ տարուայ հոկտեմբերի 19-ին:

Այս պատուական քահանան ծնուած է 1829-ին Սուրա աւանում մանկական հասակում թոյլ ու տկար՝ ցաւից նա աչք չէ բաց արել, Հիւանդութիւնը նրանից չի հեռացել և պատանեկութեան տարիներում, սրով բացատրում է ինքը իւր դուռն զգուարութիւնը ուսման մէջ, որին յաղթելու համար անդադար ազօթում ու Աստուծոյ օգնութեան էր դիմում: Տարեքի հետ սակայն տկարութիւնը պակասում է, Աստուածային լուսով պայծառացած՝ միտքը բացում է զիտութեանց համար, և նա 1855 ին արդէն առաջին աշակերտ՝ աւարտում է Ս. Պետրբուրգի հոգեւոր ձեմարանը, աստուածաբանութեան կանդիդատի մրցանակագրով:

Աստուածաբանական, փիլիսոփայական և պատմական գիտութիւնները ընդարձակեցին և խորացրին իմ աշխարհաբանութիւնը: Հին և Նոր Կտակարանների ընթերցանութիւնը, Յովհանն Ռուկեբերանի և ուրիշ եկեղեցական հարց երկերի ուսումնասիրութիւնը զարթեցրին տէր դէպի քահանայական կոչումը, Մարդկանց հոգեւոր փրկութեանը օգնելու ցանկութեամբ այլուում էի, և Աստուած իմ բաղձները կատարեց. բարձրագոյն ուսումնաւարակութիւն յետոյ՝ շուտով քահանայական պաշտօնին բարձրացայ: Եւ ահա 44 տարի է, որ այդ սպասարորութեան մէջ եմ, միջնորդ լինելով արարածոց և Երարչի մէջ, հաշտութեան և բաւութեան ամենօրեայ անարկուն պատարագըն եմ մատուցանում, որով և ինքս էլ հաշտուում եմ Երդարադատ Գառաւորի հետ և յայտնում նորա կամքը կորստեան ճանապարհում մոլորուող մարդոց:

Հ. Իոհաննէս համբաւը Ռուս հասարակութեան մէջ գնալով բարձրանում է, և նորա սիրողներն, լաւ ևս առել պաշտողներն թիւը՝ անհամար է: Նրան ոչ միայն իւր բարեգործ, մաքրասէր քահանայն են ճանաչում, այլ հրաշագործի տեղ են զբէլ. հաստատ հաւատացողներ կան—իսկ զբանք անթիւ են,—որ նորա մեակ օրհնութիւնն ու ազօթքը ձեռքը գլխին դնելը, նոյն իսկ հայկացքը կամ շորերին զխնելը, առողջութիւն կպարգևէ հիւանդին: Աւելորդ չի լինիլ այս առթիւ՝ Ս. Ս. ԲԵՏՈՄՈՍԻ ԹԵՐԻՍԵՐԸ մի աշխատակցի բացատրութիւնը մէջ բերել:

Ընդհանրապէս Հ. Իոհաննէս սիրում և յարգում է մանաւանդ հասարակ, աղքատ դա-